ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 5, 1963 Общественные науки

ԳՐԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՈՒՄ

Ժամանակակից գրականության հարցերին նվիրված գիտական սեսիա

Ժամանակակից գրականության բազմաթիվ հարցեր ընդգրկեց մայիսի 14-ին և 15-ին գրողների միության դահլիճում կայացած Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի և Հայաստանի սովետական գրողների միության միացյալ գիտական սեսիան:

Իր բացման խոսքում ՀՍԳՄ վարչության առաջին քարտուղար Էդ. Թովմասյանը համառոտակի բնութագրեց ժամանակակից պայմաններում գրականության դերը, նշանակությունը և խնդիրները, մատնանշելով սովետահայ գրականության տեղը սովետական գրականության բարձր գաղափարայնության համար մղվող պայքարում:

«Սովետահայ պոեզիան 1961—1962 թթ.» իր զեկուցման մեջ բնաղատ Վ. Մնացականյանը մանրազնին բնության ենթարկեց վերջին երկու տարիներին մեզանում ստեղծված փոքր ու մեծ կտավի պոետական երկերը, լուսաբանեց տարադիցիաների օգտագործման և նորարարության հետ կապված հարցերը, բնաղատության ենթարկեց անցյալի իդեալականացման, սիրային պոեզիայի մանրատվածության, «ախ ու վախի» տրամադրությունների առանձին դրսևորումները, ցույց տալով մեծ պոեզիայում աշխատավոր մարդու, անկեղծության և ժողովրդայնության վճռական նշանակությունը:

Ընդարձակ կտավի արձակին էր նվիրված բանասիրական գիտությունների թեկնածու Զ. Ղուկասյանի «Արդի սովետահայ վեպը» զեկուցումը: Զեկուցողը հանգամանալից վերլուծության ենթարկեց մի շարք վեպեր և վիպակներ, ցույց տվեց դրանց ոճային առանձնահատկությունները, իր բնաղատության պարբերությունները ուղղելով նիմնականում լուսանկարչականության և կյանքի փաստագրության երևույթների դեմ:

Մեծ հետաքրքրությամբ լսվեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ջահարյանի «Դրականագիտությունն ու բնաղատությունը այսօր» զեկուցումը: Զեկուցման մեջ լուսաբանվեցին հայ հին, նոր և ժամանակակից գրականության մի շարք հարցեր՝ կապված արվեստի խնդիրների, գաղափարական և գեղարվեստական մեծ նպատակների հետ, արծարծվեցին գրականության հետագա զարգացմանը վերաբերող մի շարք դրույթներ:

«Սովետահայ պատմվածքը» զեկուցման մեջ բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Արզումանյանը բնության ենթարկեց արվեստի ու ժամանակի փոխհարաբերության հարցը և արդի սովետահայ պատմվածքների դրական ու թերի կողմերը:

Մանկական գրականության հրատապ հարցերի լայն բնությամբ զբաղվեց բանասիրական գիտությունների թեկնածու Ե. Գյուլնազարյանը իր «Մանկական գրականությունը վերջին տարիներին» զեկուցման մեջ: Նա նյութը դիտեց արվեստին առաջադրվող մեծ նպատակների լույսի տակ:

ԹՈՒՄԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ստեղծագործության նկատմամբ հետաքրքրությունը գնալով անում, ավելի մեծ չափեր է ընդունում: Եվ դա միանգամայն հասկանալի է: Թումանյանը բազմարովանդակ և բազմաձև ստեղծագործության մեջ հանճարեղությամբ ցոլացրեց հայոց հազարամյա ոգին, բոլորից ավելի փիլիսոփայեց, բայց և բոլորից ավելի փարվեց հողին ու ժողովրդին, համակողմանի լուսավորելով գրականության գալիք նանապարհները: Այդ նանապարհների խաչուղիներում էլ, սովետահայ գրականության ստեղծման ծանր երկունքում, գրական տեսակետների բախման մեջ, թեորիայում և պրակտիկայում աստիճանաբար հրապարակ էիս հանվում մեծ բանաստեղծի ստեղծագործության գաղտնիքները, որոնք դիտված, զնահատված էին անցյալի, ներկայի, ապագայի տեսանկյունից, դառնալով բանկազին ավանդություններ: Այսօր արդեն կարելի է խոսել սովետահայ գրա-

կանագիտությանն շատ կարևոր մի բաժնի՝ թումանյանագիտության մասին:

Չնայած թումանյանագիտությունը հետաքրքիր և արժեքավոր նվաճումներ ունի, սակայն մեծ և անպարփակ նյութի համեմատությամբ՝ տակավին փոքր է և պարփակ: Թումանյանագիտության է՛լ ավելի զարգացմանը մեծապես նպաստում են ՀՍՍՌ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի ամենամյա թումանյանական գիտական նստաշրջանները: Այդպիսի վերջին նստաշրջանը կայացավ ապրիլի 27-ին և 28-ին Հայկական ՍՍՌ ԳԱ փոքր դահլիճում՝ գրական լայն հասարակայնության մասնակցությամբ:

—Անցյալ՝ 1962 թվականից սկիզբ դնելով ամենամյա թումանյանական գիտական նստաշրջաններին, Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը նկատի է ունեցել և ունի Թումանյանի բացառիկ նշանակությունը հայ ժողովրդի հոգևոր զարգացման պատմության համար,—իր բացման խոսքում ասաց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ռենիկյանը: —ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ բառը այստեղ պայմանական է և, թերևս, ավելորդ: Թումանյանն այն մեծություններից է, որոնք չեն պարփակվում ու սպառվում մի որևէ պատմաշրջանում:

Նա համառոտակի բնութագրում է թումանյանագիտության անցյալը, որից հետո սկսվում է բազմաբեմա զեկուցումների ընթերցանությունը:

Բանասիրական գիտությունների թեկնածու Ս. Աղաբաբյանի «Թումանյանի գեղագիտական իդեալը և արդիականությունը» զեկուցումը իր բնույթով ամենաընդհանրականն էր և իր նշանակությամբ՝ առավել արժեքավոր: Հայ նոր գրականության համապատկերում մեծ բանաստեղծի ստեղծագործության խորը ընթերցմամբ զեկուցողը հանգում է գիտական եզրակացության. «Հովհաննես Թումանյանը հեղաշրջում կատարեց իր ժամանակի գեղագիտական պատկերացումների մեջ: Բառի բուն իմաստով հեղաշրջում, որը կապված էր նախ և առաջ գրականության էպիկականության սկզբունքի ուժեղացման և ժողովրդական մարդու հոգեկան արժեքների հայտնագործման երևույթի հետ»:

Զեկուցման մեջ արծարծված բազմաթիվ հարցերից առանձնապես հետաքրքիր էր Թումանյանի և մեր ժամանակի փոխհարաբերության հարցը: Ի տարբերություն Թումանյանի ավանդների նկատմամբ գրողների ու գրականագետների «տրադիցիոն» զգուշավորության, Ս. Աղաբաբյանը հոչակեց դրանց անգնահատելի նշանակությունը արդի գրականության և նրա վաղվա օրվա համար. «...նրա փորձի ուսումնասիրությունը ժամանակակից գրականության համար ոչ թե գրական ժառանգության օրենքի հերքական պատվիրանն է, այլ խորապես արդիական ու խորապես կենսական անհրաժեշտություն»:

Բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Բասպարյանի «Թումանյանը և հայ բառարանագրությունը» ուշագրավ զեկուցման մեջ վեր հանվեցին Թումանյանի լեզվամտածողության հարուստ գույները:

Թումանյանի և Տերյանի՝ հայ նոր գրականության այդ երկու սյուների ստեղծագործական ընդհանրությունների հարցին էր նվիրված Ռ. Իշխանյանի զեկուցումը: Նա, իրավացիորեն, ընդհանրություններ է գտնում ոչ այնքան գեղարվեստական ձևերի և թեմաների մեջ, որքան հայրենիքի, հողի, ժողովրդի նկատմամբ երկու բանաստեղծների ունեցած զգացմունքներում:

Մեծ հետաքրքրությամբ լսվեց բանասիրական գիտությունների թեկնածու Էդ. Ջրբաշյանի «Կոմիկականի առանձնահատկությունները «Պոետն ու մուսան» պոեմում»: Զեկուցողը պոեմը քննեց հայ և համաշխարհային գրականության համապատկերում, ցույց տվեց նրա տեղը և նշանակությունը, անելով գեղագիտական-փիլիսոփայական մի շարք ընդհանրացումներ:

«Թումանյանը վրաց գրական մտքի գնահատմամբ» զեկուցման մեջ Տ. Կարապետյանը հետաքրքիր փաստերով, հանգամանալից ստեղծեց մեծ բանաստեղծի վրացական դիմանկարը, վեր հանելով նրա անձնավորության ու ստեղծագործության անգնահատելի արժանիքները:

Գ. Դանիելյանը «Գիքորի կերպարի հոգեբանական վերլուծությունը» զեկուցման մեջ հմտությամբ երևան հանեց անմահ ստեղծագործության ներքին ծալքերը, խորհրդածելով կերպարի ստեղծման թումանյանական մի շարք միջոցների շուրջը:

Թումանյանական երկրորդ գիտական ընթերցումները առաջընթաց քայլ են դեպի մեծ բանաստեղծի «աչքի նման պարզ ու աչքի նման բարդ» ստեղծագործության ուսումնասիրությունը:

Ն. ԱԴԱԼՅԱՆ